ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

« 21 » մարտի 2024 թ.

№ 9-Ա

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ +(374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. Որոշման ընդունման համար հիմք հանդիսացած փաստերը.**

Երևանի քաղաքապետարանի և «ԱԳՐՈՍՅԱ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) միջև 10.01.2024 թվականին կնքված հ. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/10» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

«ԱԳՐՈՍՅԱ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել կնքված պայմանագրով նախատեսված ֆինանասական միջոցների առկայությունից հետո ներկայացված հ. 1 համաձայնագիրի նախագիծի հաստատված տարբերակը: Ուստի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, հիմք ընդունելով 10.01.2024թ. կնքված հ. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/10» գնման պայմանագրի 8.15-րդ կետը՝ ՀՀ կառավարության 2017

թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և 17-րդ ենթակետի հիմքով հրաժարվել է «ԱԳՐՈՍՅԱ» ՍՊ ընկերության հետ 10.01.2024թ. թվականին կնքված հ. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/10» ծածկագրով գնման պայմանագրից և միակողմանի /լրիվ/ լուծել է այն, որը 19.03.2024 թականին հրապարակվել է www.gnumner.am կայքում:

**2. Որոշումն ընդունելու հիմնավորումը.**

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում...»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման դրույթներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. ԱԳՐՈՍՅԱ» ՍՊԸ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը:

**ՀԱԿՈԲ ԲԱԼԱՅԱՆ**

21 մարտի, 2024թ.
Երևան